Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
14.07.2011թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ 6860
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	1770	25.3
դիմում	3542	52.2
բողոք	1548	23.2
կրկնակի	480	7.3
կոլեկտիվ	8	1.1.

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 1631

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	916	56.1
բողոք	415	6.7

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	219	3.1
կոմունալ-կենցաղային	32	0.4
շինարարական	154	2.2
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	32	0.4
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	150	2.1
առողջապահության	15	
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1317	19.1
օրենսդրական	193	3.2
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	374	5.4
ապարատային		
այլ հարցեր	4322	63.2
սեփականաշնորհում	52	0.7

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2011Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 6860 նամակներից մոտ 25.3%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 23.2%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 52.2%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 19.1.1%-ն անընչվում է ֆինանսական հարցերին, մոտ 5.4%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները բաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 3.1%-ը առնչվում է բնակարանային, 0.4%-ը կոմունալ-կենցաղային, 2.2%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 63.2%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առընչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6655-ին տրվել է գրավոր, իսկ 150-ին բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 55-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն